



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







(11)

Դ. ԶԱԼՅԵՎ

3

ՊԵՏԿՈ ԶՎԱՆՈՎ

Պիես չորս պատկերով


Թարգմ. Ա. Բ. Հովհաննես

H 41521



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

օգոստոս - 1928



Առյա և անսում Սոցդասզիլավարչության կից գործող Մանկա-
կան գրականության Հանձնաժողովի հավանությամբ:
№ 42

ԹԵՏՏՐԱՏԻ ԹԵՐԿՐՈՒՄ ՏՊԱՐԱՆ
ԹԵՐԵՎԱՆԻՒՄ

Հ. Ա. 930 Պ. Ա. 199

Տիրաժ 1.500

Գրառեպալար Ա. 1708 թ.



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ՄԱՐԻՆԱ ԶՎԱՆՈՎԱ
 2. ԲՈՐԻՍ — 28 տ.
 3. ՊԵՏԿՈ — 14 տ. } նրա վորդիները
 4. ՆԻԿՈԼԱ ՑԵԿԻՆ — տանուտեր.
 5. ՍԵՐԳԵՅ }
 6. ԴՄԻՏՐԻՅ } Բորիսի ընկերները.
 7. ՍՊՈՒ — ջոկատի հրամանատար.
 8. ՎԼՈՎՏԻԿԱՆ.
 9. ՌԱՅՆԱ — պառավ, Նիկոլայի աղախինը.
 10. ԶԻՆՎՈՐ.
- Զինվորներ, գյուղացիներ։
-

Գործողությունը կատարվում է բոլգարական մի ժողովիկ գյուղում մեր որերում։

Պ Ա Տ Կ Ե Ր Ի.

Զվանովսերի տունը։ Փայտե կոպիտ կարասիք։ Բեմի առջեկի մասում սեղանն կուսամուտների միջև ամանեղենի մեծ պահարան։ Ցերկու դուռը — մեկը դեպի նախասենյակը, մյուսը՝ հարեան սենյակը։ Սեղանի մոտ նստած ե Մարինան և բան ե գործում։ Փողոցից լավում ե քամու վոռնոցը։ տանիքին թմբկահարում ե անձրեք։ Ցերեկոյան ուշ ժամն ե։

ՄԱՐԻՆԱ. — Արդեն ժամի տասն ե, իսկ նրանք դեռ չկան.. (Շունք հաջում ե։ Մարինան վեր ե կենում, մոտենում պատուհանին յեվ վարագույրը բարձաց-

նելով, դուրս նայում): Կարծես նրանք են (արագ զնում ե դեպի դուռը, բայց այդ րոպեյին նրացանը ձեռքին ներս է մտնում Պետկոն): **Մենակ Բու:**

ՊԵՏԿՈ. — **Մենակ:**

ՄԱՐԻՆԱ. — **Իսկ Բորբոք:**

ՊԵՏԿՈ. — (Հրացանը պատից կախելով) Յես հասա բլուր-ներին, իջա գետի հովիտը և...

ՄԱՐԻՆԱ. — **Նրանք չկան:**

ՊԵՏԿՈ. — **Վճ:** Յերեկ նրանք ուշ կգան: (Թափի տալով քաց թիկնոցը) **Սարսափելի** փոթորիկ սկսվեց: Թամբին ուղղակի վեր և գցում մարդու: Շուրջու վոչինչ չի յերկում: Այս փոթորիկին դժվար ե տեղ դնալ:

ՄԱՐԻՆԱ. — **Արդյոք կգան, կհասնեն նրանք:**

ՊԵՏԿՈ. — **Ե՛, իհարկե կհասնեն: Բորիսն աչքերը փակ ել կգտնի ճանապարհը:**

ՄԱՐԻՆԱ. — **Խոսքս եղ մասին չե:**

ՊԵՏԿՈ. — **Բա ինչի:**

ՄԱՐԻՆԱ. — **Կարող են ձերբակալել նրանց:**

ՊԵՏԿՈ. — **Բավական ե, մայր: Յեթե Սովիալում նրանց չկարողացան ձերբակալել, ապա ես խուլ տեղերում խսկի չեն կարող (նստում ե սեղանի մոտ): Տոմսակում ասված ե՝ «կգանք զիշերը», իսկ զիշերը դեռ նոր ե սկսվում:**

ՄԱՐԻՆԱ. — **Մի կարդա, տոմսակը:**

ՊԵՏԿՈ. — **Ախր չե վոր կարդացի:**

ՄԱՐԻՆԱ. — **Մեկ ել կարդա, Պետկո:**

ՊԵՏԿՈ. — **Լավ (գրպանից հանում ե տոմսակն ու կարդում): «Այս զիշերը ընկերներով կգամ տուն: Այս մասին վոչվոք չպիտի իմանա: Բորիսօ: Ահա բոլորը:**

ՄԱՐԻՆԱ. — Դիշերը... Ե, ինչ արած, կսպասենք...

ՊԵՏԿՈ. — Իսկ հիմա ինձ մի բան տուր ուտելու. գայլի պես քաղցած եմ

ՄԱՐԻՆԱ. — Ճաշից միայն կարտոֆիլ ե մնացել:

ՊԵՏԿՈ. — Վաշինչ, տուր: (Մարինան պահարանից հանում և կաթսան յեվ դնում սեղանին): Յերեկ Սովիայում ելի վեց մարդ են կախել:

ՄԱՐԻՆԱ. — Վեց մարդ:

ՊԵՏԿՈ. — Այո...

ՄԱՐԻՆԱ. — Ե՞հ, եհ, ես ինչ ժամանակներ են: Վճրտեղից ես անքախտության մեջ ընկանք: Վճր մեղքերիս համար, վժը հանցանքների համար ե տանջվում բոլգար ժողովուրդը: Առանց այն ել հո մեր կյանքը եյանք չեր, իսկ այժմ... Զարհուրելի յեւ: Շատերին բանտ են նստեցնում, մյուսներին կախում: Ո՛, ես ինչ ե մեր որը ... ինչ են անում:

ՊԵՏԿՈ. — Ինչ են անում: Խեղդում են:

ՄԱՐԻՆԱ. — Բայց յերբ կվերջանա ես բոլորը:

ՊԵՏԿՈ. — Բորիսն ասում ե՝ միայն են ժամանակ, յերբ ժողովուրդն ել չկարողանա լոել ու համբերել:

ՄԱՐԻՆԱ. — Ե՞հ, Պետկո՛, դա շուտ չի լինիլ: Ժողովուրդն ահարեկված ե, ճնշված...

ՊԵՏԿՈ. — Վո՛չ մայր, բոլորն ել ահարեկված չեն: Ցանկովյան կախաղաններից հո բոլորն ել չեն վախենում:

ՄԱՐԻՆԱ. — Իսկ ով չի վախենում, կախաղան են բարձրացնում:

ՊԵՏԿՈ. — Բայց թե, հո բոլորին չեն կարող կախել:

ՄԱՐԻՆԱ. — Ե, ինչ—կարծում ես՝ թոկ չի ճարվիլ կախելու:

ՊԵՏԿՈ.—Բանն այդ չի:

ՄԱՐԻՆԱ.—Բա լնչն եւ:

ՊԵՏԿՈ.—Ժողովուրդը ուշքի կտա:

ՄԱՐԻՆԱ.—ՅԵՐԲ:

ՊԵՏԿՈ.—Շուտով, մայրիկ, շուտով:

ՄԱՐԻՆԱ.—Դուցե՛, ով զիտե՛ (նորից վերցնում ե ձեռագործը յեվ նստում ե Պետկոյի դիմացը: Լսվում ե անպի վորոն): Մարերում փոթորիկ ե սկսվում:

ՊԵՏԿՈ.—Թո՛ղ գա... վորքան յեղանակը վատ լինի, բորիսի համար ենքան լավ: Ալժմ նրանց վոչվոք չի նկատիլ: (Լսվում ե շան հաջոց: Մեկը կոպիտ կերպով բարկանում ե, բայց ունի չի հանգստանում յեվ սկսում ե ավելի կատաղի կերպով հաջել):

ՄԱՐԻՆԱ.—Ռո՛վ ե:

ՊԵՏԿՈ.—(Ականց դնելով) Սպա՛սիր:

ՄԱՐԻՆԱ.—Ծանոթ ձայն ե.... թե ումն ե, չեմ կարողանում վորոշել:

ՊԵՏԿՈ.—Տանուտելն ե....

ՄԱՐԻՆԱ.—Տանուտելը: Ի՞նչ ե ուզում:

ՊԵՏԿՈ. Հիմա կիմանանք... (Ներս ե մենում նիկոլա Ցելինը):

ՆԻԿՈԼԱ.—Սա հո շուն չե, դե ե, դե՛—չորքոտանի: Ափսոս վոր գլուխը չջարդեցի:

ՊԵՏԿՈ.—Ի՞նչի՞:

ՆԻԿՈԼԱ.—Նրա համար, վորպեսզի մյուս անգամ գիտենա, թե ում վրա կարելի յե հաջել և ում վրա՛ չե:

ՄԱՐԻՆԱ.—Փողոցում մութն ե: Թեզ չի ճանաչել:

ՆԻԿՈԼԱ.—Զի՞ ճանաչել: Սատանան տանի. կարող եր կծել:

- ՊԵՏԿՈ. — Բայց չե՞ վոր դեռ չի՛ կծել։
 ՆԻԿՈՂԱ. — Ե՛, կծելուց հետո ել խոսելն ուշ կլինի։ Դուք,
 ինարկե, ուրախ կլինելիք, յեթե կծեր։
 ՄԱՐԻՆԱ. — Ի՞նչ ես ասում...
 ՆԻԿՈՂԱ. — Յես ձեզ բոլոր մտածածները գիտեմ. Նիկոլա
 Ձեկինին չեք խարի։ Ուսերիս վրա փառած կոճղ չե,
 գլուխ ե, խելք կա։
 ՄԱՐԻՆԱ. — Ամեն ի՞նչ կարող ե լինել։
 ՆԻԿՈՂԱ. — Իսկ դու գիտես, Մարինա, թե ինչի յեմ յեկել
 ձեզ մոտ։
 ՄԱՐԻՆԱ. — Վհրտեղից գիտենանք։
 ՆԻԿՈՂԱ. — Թեզ հետ գործ ունեմ... Շատ կարենոր... Դա-
 տարկ բանի համար ես յեղանակին հո չեցի գալ
 քեզ մոտ։
 ՄԱՐԻՆԱ. — Դա ի՞նչ գործ ե։
 ՆԻԿՈՂԱ. — Ասա մի տեսնենք՝ վհրտեղ ե քո վորդի Բորիսը։
 ՄԱՐԻՆԱ. — (Ցնցվելով) Բորիսը։ Աշխատում ե։
 ՆԻԿՈՂԱ. — Վհրտեղ ե աշխատում։
 ՄԱՐԻՆԱ. — Սոֆիայում — գործարանում։
 ՆԻԿՈՂԱ. — Նա Սոֆիայում չե...
 ՄԱՐԻՆԱ. — Ենտեղ ե։ Հավատացնում եմ քեզ։
 ՆԻԿՈՂԱ. — Ե՛, Մարինա, դու ուզում ես ինձ խարել։
 իզնուր... Նիկոլա ծեկինը հիմար չե։
 ՄԱՐԻՆԱ. — Կարող ե պատահել, բայց...
 ՆԻԿՈՂԱ. — Թո վորդին Սոֆիայում չե...
 ՄԱՐԻՆԱ. — Ապա վհրտեղ ե։
 ՆԻԿՈՂԱ. — Վորտեղ, Դուք ավելի լավ գիտեք... (գրպանից
 հանում ե լրագիրը յեվ բաց անում) Ապա նայի՛ք
 այս նկարին... .

ՄԱՐԻՆԱ. — Բորիսն եւ

ՆԻԿՈԼԱ. — Ճանաչեցի՞ք Ալո՛, սա նա յեւ Սոֆիայի վոս-
աիկանությունը վնառում է նրան:

ՄԱՐԻՆԱ. — Սոֆիայի վոստիկանությունը...

ՆԻԿՈԼԱ. — Ալո՛, Իսկ գիտե՞ք, թե ինչու յեն վնառում
նրան:

ՄԱՐԻՆԱ. — Վոչ...

ՆԻԿՈԼԱ. — Նա...կոմմունիստ ե, հասկանում եք, կոմմունիստ:
Միևնույն ե, թե ավազակ:

ՊԵՏԿՈ. — (Սեղանին խփելով) Սուստ եւ իմ յեղբայրը
յերեկ'ք վոչվոքի չի թալանել:

ՆԻԿՈԼԱ. — Ե՛, յեթե չի թալանել, ապա կսկսի թալանել:
Միևնույն չե՞ն, ինչ եւ:

ՊԵՏԿՈ. — Կոմմունիստները թալանչիներ չե՞ն:

ՆԻԿՈԼԱ. — Ի՞նչ: Թալանչիներ չե՞ն: Իսկ քո կարծիքով
ժվքեր են նրանք: Հը՞:

ՊԵՏԿՈ. — Ովքե՞ք:

ՄԱՐԻՆԱ. — Լոկիր, Պետկո:

ՊԵՏԿՈ. — Ժամանակը կդա՛ կիմանաս:

ՆԻԿՈԼԱ. — (Տեղից վեր բռչելով) Բռնիր ինձ, Մարինա,
թե չե՞ն միա որա գլուխը կպռկեմ:

ՄԱՐԻՆԱ. — (Արագ մօտենալով նիկոլային) Լոկիր, Պետկո:

ՆԻԿՈԼԱ. — Հը՞, պառավ, ի՞նչ ես մտածում: Չե՞ վոր քո
աշքի առջև յերկրորդ խռովարան ե մեծանում: Տե՛ս,
մեկ վորդուդ կախաղանն ե սպասում, մյուսն ել նրա-
նից չի ազատվիլ:

ՊԵՏԿՈ. — Ժամանակից շուտ չկախե՞ս...

ՆԻԿՈԼԱ. — Լոկիր, ոճի ձագ: Դու դեռ յերեխա յես, թե չե՞
յես քեզ հետ ալ կերպ կխոսելի... Լոկիր, Մարինա.

ալստեղ լրագրում գրված ե, վոր կոմմունիստներին թագդնողները շատ խիստ կպատժվեն. հասկանում ես, շատ խիստ:

ՄԱՐԻՆԱ. — Հասկանում եմ:

ՆԻԿՈԼԱ. — Թո մեծ վորդին կոմմունիստ ե. նա փախել ե Սովիայից և կարող ե պատահել, վոր մտածի գալ ալստեղ՝ տուն։ Հենց վոր գա, իսկույն կհայտնես ինձ։ Իսկ յես համապատասխան միջոցներ ձեռք կառնեմ։

ՄԱՐԻՆԱ. — Ի՞նչ։ Քեզ հայտնեմ։ Դու ուզում ես, վոր յես մատնեմ վորդուս։ Միթե դու կարծում ես, վոր յես իմ սեփական ձեռքերով կախաղանի հանգույցը անց կկացնեմ նրա վիզը։ Վո՞չ, այդ յերբեք չի լինիլ։

ՆԻԿՈԼԱ. — Զի՞ լինիլ։ Բա մոռացմբ դաժան պատժի մասին...

ՄԱՐԻՆԱ. — Պատժով ինձ չես վախեցնի։ Մահից նույնիսկ յերիտասարդները չեն վախենում. իսկ յես պառավ եմ ու իսկի յել չեմ վախենա։ Յես իմ որն արդեն անց եմ կացրել. միհնույն չե ինձ համար, թե վորտեղ կմեռնեմ—տանը, թե կախաղանի վրա։

ՆԻԿՈԼԱ. — Ե՞լ թե ինչ յերգ ես յերգում։ Այո՛ ինչ յես յերեռում ե, դու յել կոմմունիստկա յես։ Լավ...

ՄԱՐԻՆԱ. — Վոչ թե կոմմունիստկա, այլ մայր։

ՆԻԿՈԼԱ. — Ինչպես յերեռում ե, ես ձեր տունը մի ամբողջ բուն ե, և մայրը, և վորդիները, — բոլորը կարմիր գույն են ընդունել։ Ի՞նչ կա վոր... Թո բոլոր ասածները յես վաղը կհայտնեմ ուր հարկն ե, և այնտեղ կպարզեն — կոմմունիստկա յես, թե կոմմունիստի մայր (վեր ե կենում):

ՊԵՏԿՈՒ.—ՀԱՅՄՆԻՌ, մենք չենք վախենում:

(Դուռը ծեծում են: Մարինան բաց ե անու դուռը
ներս և մտնում գլխարկը մինչեւ աչքերը բաւած,
պայուսակն ուսին մի ծերունի):

ԾԵՐ.—(Գլուխ տաղով) Բարի յերեկո:

ՄԱՐԻՆԱ. — Բարի՝ յերեկո, բարե:

**ԾԵՐ.—Արդյոք թույլ կտաք ձեզ մոտ զիշերել Յհս ամ-
բողջ գյուղը պտտեցի, ամեն տեղ արդին քնած են-
իսկ դուրսը բուք ե. դժվար ե գնալ:**

**ՄԱՐԻՆԱ. — Կարելի յի, կարելի՛, Հանվիր և կրակին մոտ
նստի՛ր:**

**ԾԵՐ.—Շնորհակալ եմ (հանում ե թիկնոցն ու պայու-
սակը):**

ՆԻԿՈՂԸ. — Մ՛վ ես դու:

ԾԵՐ.—Գյուղացի, Սոփիալից վերադառնում եմ առնե:

ՆԻԿՈՂԸ. — Հը մ... Սոփիալի՞ց:

ԾԵՐ.—Այո՛, Սոփիայից (նստում ե վառարանի մոտ):

ՊԵՏԿՈՒ.—Մոտիկ նստիր, պապի, շուտ կչորանաս:

**ԾԵՐ. — Վոչինչ, վոչինչ, Դժվար ե ճամպաս գնալը, են ել
ծերունուս համար: Ինձ հետ ճանապարհորդակիցներ
կալին, բայց ցըվեցին: Կարծեմ նրանցից մեկը հենց
այս գլուղիցն եր:**

ՆԻԿՈՂԸ. — Ասում ես այս գյուղի՞ց:

ԾԵՐ.—Այո՛, յեթե չեմ սխալվում:

ՆԻԿՈՂԸ. — Իսկ ի՞նչպիսի մարդ եր:

ԾԵՐ.—Վոչ բարձրահասակ... մոտ 25 տարեկան:

**ՆԻԿՈՂԸ. — Սպասիր, սպասիՌ, հիմա յես քեզ ցուց կտամ+
(Գրպանից հանում ե լրացիրը): Ապա նայիՌ, ծերուկ,
այս յերիտասարդի հետ երիր գայիս:**

- ԾԵՐ.—Նա՛ լեւ իհարկե նա լեւ:
 ՆԻԿՈՂԱ. —Դեւ, ինչ կասես, Մարինա:
 ՄԱՐԻՆԱ. —Ասելու վոչինչ չունեմ:
 ՆԻԿՈՂԱ. —Հիմա նրա բանը պրծավ... Սոֆիալից փախավ,
 բայց ինձանից չի փախչի:
 ԾԵՐ.—Իսչպես յերկում եր, վտանգավոր յերիտասարդ եր:
 Ընկերներն ել նրա նման ելին:
 ՆԻԿՈՂԱ. —Ի՞նչպես նա մենակ չեր:
 ԾԵՐ.—Վո՞չ ընկերներով եր:
 ՊԵՏԿՈ. —Լոկ'ր, պապի:
 ԾԵՐ. —Նրանք շատ ելին զալրաց . ծ ալստեղի տանուտե-
 րի վրա:
 ՆԻԿՈՂԱ. —Տանուտերի:
 ԾԵՐ. —Այո՛. Յերեի սրիկալի մեկն եւ:
 ՆԻԿՈՂԱ. —Ո՞վ:
 ԾԵՐ.—Ալստեղի տանուտերը:
 ՆԻԿՈՂԱ. —Դեւ, գեւ, ծերուկ, խոսի՛ր, բայց դուքս մի-
 տուր...
 ԾԻՐ.—Զեր յերիտասարդն եր ասում: Յես վժրտեղից գի-
 տենամ... Ոտար մարդ եմ:
 ՆԻԿՈՂԱ. —Ե՛լ ինչ եր ասում նա:
 ՄԱՐԻՆԱ. —Զհամարձակվես ասել, ծերուկ:
 ԾԵՐ.—Շատ բան, վո՞ր մեկը պատմեմ: Ճիշտ ասած, յես
 դիտմամբ նրանցից առաջ ընկա, վորպեսզի զգուշաց-
 նեմ տանուտերին:
 ՆԻԿՈՂԱ. —Զգուշացնես:
 ԾԵՐ.—Այո... Թեև նա՛ անամոթ ե ու սրիկա, բայց թե-
 կի մարդ եւ Մեղք ե, յեթե կախեն:
 ՄԱՐԻՆԱ. —Ում կախեն:

ԾԵՐ. — Տանուտերին են ուղում կախել։ Ասում ելին՝ տա-
նիցը կգողանանք նրան։ Կտանենք սարերը և այնտեղ
հենց առաջին ծառիցը կկախենք... Շանը՝ շան ման,
Նիկոլան միաժամանակ աչերը խոժուած նայում
է ծերին, ապա սկսում է արագ սի անկյունից մյուսը
բայլել։ Պետք է զգուշացնել տանուտերին, թե չե
նրանք այս գիշեր այստեղ կլինեն...

ՊԵՏԿՈ. — (Արագ մոտենալով ծերին) Դուքս կորիր մեր
տանից, հիմա՞ր ծերուկ։

ԾԵՐ. — Ի՞նչ պատահեց քեզ, այ տղա։
ՆԻԿՈԼԱՅ. — Նրանք ինձ մատով ել չեն գիպչիր Յես... յես
զինվորներ կկանչեմ։ Յես նրանց անժիշտապես կձեր-
բակալեմ։ Յես... յես...

ԾԵՐ. — Ե՛, դու ինչմու յես տաքանում։ Հո քե՞զ չեն ուղում
կախել։

ՆԻԿՈԼԱՅ. — Յես տանուտերն եմ։

ԾԵՐ. — Դու, զե՞ս ուրեմն քեզ ել կկախեն։

ՆԻԿՈԼԱՅ. — Իսկ ինչի՞ համար կկախեն ինձ։

ԾԵՐ. — Յերեկի իրենք կդիտենան։

ՆԻԿՈԼԱՅ. — Կտեսնենք։ Յես զինվորներ կկանչեմ։ մենք
նրանց կձերբակալենք։ Նրանք մեզնից չեն փախչի։
Աղոթիր վորդուդ համար, Մարինա։ Նրա որերը
հաշված են (դուրս ե փախչում)։

ԾԵՐ. — Ոհն, ինչպես չե՛։

ՄԱՐԻՆԱ. — (Մոտենալով ծերին) Այս ըոպեյիս կորիր
աւստեղից։ Քեզ համար իմ տանը տեղ չկա։ Դու
մատնեցի՞ր վորդուս։

ԾԵՐ. — Մայր... (պոկտում է պարիկը յեվ մորուսը)։

ՄԱՐԻՆԱ. — Բորիս...

ՊԵՏԿՈ. — ՅԵՂԲԱՐ:

ԲՈՐԻՄ. — (Գրկելով մորը յիվ յեղբօրը) Ահա և յես...
վողջ և առողջ տեղ հասաւ:

ՄԱՐԻՆԱ. — Իսկ ինչու յես այդպես հագնվել, Բորիս,
ինչի՞ համար են այդ մորուքն ու բեղերը:

ԲՈՐԻՄ. — Իմ նկարն ուղարկված ե ամեն տեղ: Վոստի-
կանությունը վորոնում է ինձ: Յեթե այս պարիկը
չլիներ, ինձ վաղուց ձերքակալած կլինելին:

ՊԵՏԿՈ. — ՄԵՐԵ գու ուղում ես տանուտերին կախել:

ԲՈՐԻՄ. — Ինարկե վոչ: ՄԵՐԵ արժե ձեռքներս կեղտոտել
կու ժամանակը, և նրանց առանց ինձ ել կկախեն:
Յես նրան միայն վախեցրի:

ՊԵՏԿՈ. — ՄԵՆԱԿ յեկար:

ԲՈՐԻՄ. — Վոչ, ընկերներով:

ՄԱՐԻՆԱ. — Բա նրանք մեր են:

ԲՈՐԻՄ. — ՄԵՆՔ ձայներ լսեցինք, ու յես մենակ մտա-
նրանց թողի նրբանցքում: Խոտի մեծ դեղի մոտ-
գնա նրանց յետելից, Պետկո: ՄԵՆՔ միքիչ կհանգըս-
տանանք, կտաքանանք և հետո առաջ կշարժվենք:

ՄԱՐԻՆԱ. — Ո՞ւր:

ԲՈՐԻՄ. — Սարերը, ՄԵՆՔ այստեղ չենք կարող մնալ: Ա-
մեն ըուե կարող են մեզ ձերքակալել: Իսկ սարե-
րում մեզ յերբեք չեն գտնի: ՄԵՆՔ այնտեղ ապա-
հով կլինենք:

ՊԵՏԿԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ

Նիկոլա Ցեղանի բնակարանը, Սեղանի մոտ նստած և Ցեղանը,
Նրա դիմացը՝ վոստիկանը, Դուրսը վոռնում ե քամին, Անձրեվ և
գալիս:

ՆԻԿՈԼԱ. — Գյուղացիների վրա չի՝ կարելի հույս դնել:
Նրանք համակրում են կոմմունիստներին, Ցես գի-
տեմ այդ:

ՎՈՍՏ. — Ալդակիսիներին պետք ե ձերբակալել:

ՆԻԿՈԼԱ. — Ամբողջ գյուղը հո չես ձերբակալիլ, Ցես եղ
թոկից փախածները գյուղը մտնեն—ապա...

ՎՈՍՏ. — Զե՞ս մտնի, Գյուղի շուրջը պահակ եմ կանգնեց-
րել:

ՆԻԿՈԼԱ. — Խնչ ոգուտ այդ պահակից, քանի վոր դրանք
ել նույն գյուղացիներն են:

ՎՈՍՏ. — Ցես ամենավստահելիներին եմ ջոկել:

ՆԻԿՈԼԱ. Շատ են:

ՎՈՍՏ. — Մոտ տասնուհինգ հոգի կլինեն:

ՆԻԿՈԼԱ. — Միմիայն 15 հոգի, իսկ մնացածները... Մնա-
ցածները դեմ են մեզ, Խնչ պետք ե անենք մենք:

ՎՈՍՏ. — Լուսաբացին զինվորներն այսուեղ կլինեն:

ՆԻԿՈԼԱ. — Զինվորները կգան միայն առավոտը, իսկ այդ
սրիկաներն այսուեղ կլինեն զիշերը, Նրանց յերեա-
լուն պես գյուղացիները նրանց կողմը կանցնեն, և
այն ժամանակ... այն ժամանակ...

ՎՈՍՏ. — Կախան,

ՆԻԿՈԼԱ. — Խնչ ես ժամանակից շուտ կռկռում, Զինի՞ թե
դու լել ես ուզում, վոր կախեն ինձ:

ՎՈՍՏ. — Աստված մի արասցե,

ՆԻԿՈՂԱՐ.—Ա՛յ թե ինչ, Հարկավոր ե Մարինայի տան վրա
հսկողություն ունենալը. Յեթե նրանք գյուղ մտնեն,
անպայման այնտեղ կգնան, հասկանմամ ես:

ՎՈՍՏ.—Հասկանում եմ:

ՆԻԿՈՂԱՐ.—Մարինայի տան վրա կհսկես դո՛ւ: Հենց յերե-
վան, իսկույն կհայտնես: Են ժամանակ մեզ հետ
կվերցնենք ամենահավատարիմ գյուղացիներին և
կբռնենք նրանց: Հասկացմաք:

ՎՈՍՏ.—Հասկացա:

ՆԻԿՈՂԱՐ.—Դե՛, հիմա գնա՛: Ինքս ինձ կպաշտպանեմ:
(Վոստիկանը գնում է): Կտեսնենք, թե ով ում կը-
կախի: Իմ կողմն ե իշխանությունը, վոստիկանու-
թյունը, զորքը, իսկ ով կա նրանց կողմը: Գյուղա-
ցիները (մի ժամանակ լուր կանգնում է): Իսկ յե-
թե զինվորներն առավոտյան չգտնն: Նրանք կզրավեն
զյուղը և ինձ... աստված իմ, վողորմիր քո ստրուկին
(արագ խաչակինում է). Թո՛ւ, նույնիսկ քրտնեցի...
(նոսում է): Վո՞չ, զինվորները պետք ե դան: Պարտա-
վոր են դալ: Ու այն ժամանակ մենք կվոշնչացնենք
այս բունքը: Յեվ պառավին, և վորդիներին: Վոչվոքի
չենք ինայի: (Մոտենալով դռանը) Ռայնա, Ռայնա:

ՌԱՅՆԱ.—(Մտնելով) Ի՞նչ ե:

ՆԻԿՈՂԱՐ.—Խլացել ես, ինչ ե, կախարդ պառավ:

ՌԱՅՆԱ.—Փառք աստծու, դեռ լսում եմ:

ՆԻԿՈՂԱՐ.—Լսում ես, բայց լավ չես լսում: Գնա մառանից
իմ հրացանը բեր:

ՌԱՅՆԱ.—Ի՞նչը:

ՆԻԿՈՂԱՐ.—Թո՛ւ, փառած կոճդ: Հրացանը—վորով կրակում
են: Հասկացմաք:

ՈԱՅՑՆԱ. — Հասկանում եմ, հասկանում:

ՆԻԿՈՂԱ. — Զգուշ ընթիւ լիքն ե (Մայնան զնում ե). Կար ժամանակ, վոր թռած թռչունին զցում եմ. Դուցե հիմա յել չվրիպեմ, յեթե կարիք լինի. (Մոտենում ե լուսամուտին յեվ միառժամանակ ականջ ե դնում բամու վոռնոցին): Առանց այն ել սիրտս անհանգիստ ե. հիմա յել բուք վեր կացավ... Վո՞նց ե վոռնում. այսպիսի յեղանակին միթե հնարավոր ե նրանց հետեւ. Մասներիդ արանքով վոր փախչին, չես նկատի: Աստվածիմ, փրկիք, ազատիր ինձ: (Հրացանը ձեռքին մտնում ե Մայնան):

ՈԱՅՑՆԱ. — Ահա:

ՆԻԿՈՂԱ. — Թո՛ւ, վախեցրիք, կախարդ: (Նստում ե յեվ նրացանը դնում սեղանին): Իսկ հիմա գնա սրահը և մինչև առավոտ նստիր այստեղ: Հասկանում ես: Ցերք դուռը ծեծեն, խսկույն վազիք այստեղ. Հնամարձակվես դուռը բաց անել, Բայց տես, յեթե աչքդ կպցնես, մազերդ զլիմիցդ կպոկեմ: Հասկանում ես:

ՈԱՅՑՆԱ. — Ինչպես չեմ հասկանում:

ՆԻԿՈՂԱ. — Գնա... ասենք սպասիք (Մայնան կանգ ե առ նում): Մոտեցիք ինձ... Ելի՞ մոտեցիք. յես չեմ կծում (Մայնան մոտենում ե Նիկոլային): Հիմա նայիք աչքերիմա... դե, դե... ուղիղ նայիք, ի՞նչ ես չորս կողմդ պլշում:

ՈԱՅՑՆԱ. — Ախը դե...

ՆԻԿՈՂԱ. — Հիմա դե՛ ասա՛. դու յել ես նրանց հետ:

ՈԱՅՑՆԱ. — Ո՞ւմ:

ՆԻԿՈՂԱ. — Կոմմունիստների:

ՈԱՅՆԱ. — Ինչե՞ր ես ասում: Ցես նրանց իսկի չեմ ել
տեսել:

ՆԻԿՈՂԱ. — Ասում ես: Աչքերից յերեսում ե, վոր ստուժ
ես: Նիկոլա Ցեղինին չես խաբի: Նիկոլա Ցեղինը
զեանի տակն ել ե տեսնում: Դու յել ես կոմմունիստ-
ների կողմը:

ՈԱՅՆԱ. — Ցես միշտ քեզ հավատարիմ եմ ծառայել...
Տան բոլոր աշխատանքները կատարել եմ... իսկ դու...
դու... (լաց ե լինում):

ՆԻԿՈՂԱ. — Դե՛ լա Ե բավական ե... վերջ տուր:

ՈԱՅՆԱ. — Ցես յերբեք...

ՆԻԿՈՂԱ. — Ասում եմ լոիր, պառագ... (դուրը ծեծում
են): Ո՞վ հ:

ՈԱՅՆԱ. — (Գոզնոցով իրթը սրբելով) Ծեծում են:

ՆԻԿՈՂԱ. — Դնա՛ տես՝ ով ե:

(Խայնան զիում ե: Նիկոլան վերցնում ե նրացանը
յել փակաղակը չխէջխկացնում):

ՈԱՅՆԱ. — (Վերադառնալով): Ինչ-վոր զյուղացի յե...
Զեզ ե ուզում:

ՆԻԿՈՂԱ. — Բաց չանես: Գյուղացիներն ել նրանց հետ են:

ՈԱՅՆԱ. — Ցես արդեն բաց եմ. արել:

ՆԻԿՈՂԱ. — Խելագարվել ես, ինչ ե: Եղ նրանք են:

ՈԱՅՆԱ. — Ո՞վքեր - նրանք:

ՆԻԿՈՂԱ. — Կոմմունիստները:

ՈԱՅՆԱ. — Ի՞նչ ե ասում:

ՆԻԿՈՂԱ. — Դու ինձ մատնեցիր, ջադաւ, դու (Վասի ձայն
ե լսվում): Զմանեք, կկրակեմ (նւան ե բռնում:
Ներս են մտնում մի սպա յեզ միքանի զինվոր-
ներ):

Պետկո Զվանով — 2



- ՍՊԱ.** — Ի՞նչ ես անում, խելազարվել ես, ինչ ե:
ՆԻԿՈՂԱ. — Վո՞չ, վոչ... Հրացանս եմ մաքրում:
- ՍՊԱ.** — Դու յես տանուտերը:
- ՆԻԿՈՂԱ.** Այո՛ (արողը տալով) ինդրեմ նստեք, ալ-
 սպա:
- ՍՊԱ.** — (Նատելով) Արդյոք զիտե՞ս, վոր քո գյուղում Յ
 կոմմունիստ կա թագնված, վորոնց վորոնում է Սո-
 ֆիայի վոստիկանությունը:
- ՆԻԿՈՂԱ.** — Զի՛ կարող պատահել, պարոն սպա՛. Մենք սպա-
 սում ենք նրանց: Յես արդեն ամեն տեղ պահակ եմ
 նշանակել:
- ՍՊԱ.** — Պահակդ ել քեզ նման հիմար ե:
- ՆԻԿՈՂԱ.** — Ի՞նչ եք ասում:
- ՍՊԱ.** — Կոմմունիստներն արդեն այստեղ են:
- ՆԻԿՈՂԱ.** — Այստեղ:
- ՍՊԱ.** — Այո՛. Նրանք Մարքինա Զվանովալի տանն են:
- ՆԻԿՈՂԱ.** — Այդ տանը հսկում են, պարոն սպա:
- ՍՊԱ.** — Ո՞վ ե հսկում:
- ՆԻԿՈՂԱ.** — Մեր վոստիկանը: Յես նրան ես ըռպելիս են-
 աեղ ուղարկեցի:
- ՍՊԱ.** — Այս ըռպելիս: Դե՛, իհարկե, նրանց նա չի հանդի-
 պի, քանի վոր նրանք արդեն տանն են:
- ՆԻԿՈՂԱ.** — Եթև վոչինչ չգիտեմ, պարոն սպա:
- ՍՊԱ.** — Պարզ ե, վոր չգիտես: (Դիմելով զինվորներին)
 Մենք հիմա կգնանք ալդ տունը: Տեսք, զգուշ յե-
 ղեք: Այդ սատանաներից ամեն ինչ սպասելի յե:
 Նրանք բանալու ծակով անդամ կփախչեն: Յեթե մի
 բան լինի, իսկույն կրակեցեք: Կենդանի, թե մեռած,
 նրանց պետք ե բռնել: Տանուտերը, դու կզամ մեզ հետ:

ՆԻԿՈՂԱ. — Ներեցեք, պարոն սպա, յես չեմ կարող:

ՍՊԱ. — Ինչու:

ՆԻԿՈՂԱ. — Ալսպիսի յեղանակին յես դուրս գալ չեմ կառող: Վոտքերս ցավում են:

ՍՊԱ. — Վախենում ես (Վազիլով մտնում ե վոստիկանը):

ՎՈՍՏ. — Նրանք... նրանք այնտեղ են:

ՍՊԱ. — Ահա՛, տես, Ալսր յես ասում ելի:

ՆԻԿՈՂԱ. — Այնտեղ են: Ի՞նչպես են ներս մտել:

ՍՊԱ. Ձեր պահակի կողքով կուրոն ել կփախչի:

ՆԻԿՈՂԱ. — Գլուղացիներն են թողել: Համակըսում են նրանց:

ՍՊԱ. — ԴԵ, եղ հետո կպարզենք, իսկ հիմա... հիմա պետք ե գործի անցնել (Վոստիկանին): Դու տեսալ նրանց:

ՎՈՍՏ. — Չտեսա, վորովհետև պատուհաններին վարագույր ե քաշած, բայց լսեցի:

ՍՊԱ. — Ի՞նչ լսեցիք:

ՎՈՍՏ. — Միայն ձայներ, պարոն սպա՛: Ուզում եյի մոտենալ լուսամուտներին, բայց անտեր շունը քիչ մնաց վոտքս կծեր:

ՍՊԱ. — Լավ! Հիմա նրանք մեր ձեռքից չեն փախչի: Նրանք մերն են...

ՆԻԿՈՂԱ. — Պարոն սպա, թուլլ տվեք յես տանը մնամ:

Այս յեղանակին յես չեմ կարող դուրս գալ:

ՍՊԱ. — Կաց: Մենք առանց քեզ ել կգնանք:

ՆԻԿՈՂԱ. — Իհարկե, կգնաք: Վայ... (Բունում ե վօսքը):

ՍՊԱ. — Ի՞նչ պատահեց:

ՆԻԿՈՂԱ. — Անիծված վոտքս... Սա ինձ գերեզման կտանի:

Այսպես ե ցոլքում, կարծես միջին հաղարավոր վորգեր են վխտում: Վայ:

ՍՊԱ. — (Վուսիկանին) Դու կդա՛ս մեզ հետ:
ՎՈՍ. Լուռմ եմ:

ՍՊԱ. — Հեծնել ձիերը (բոլորը դուրս են գնում):
ՆԻԿՈՂԱ. — (Նայելով նրանց յետեվից) Խարեցի... Նիկոլա
 Յեկինը հիմարներից չե՛: Նիկոլա Յեկինը միշտ դուրս
 կպրծնիւ (Խիելով սեղանին) Դե՛, Զվանով, հիմա
 զգուշացիր, Ռւզում ելքր ինձ կախել, այժմ ինքդ կը-
 կախվես: Քո պարանոցի համար թոկը վաղուց ե-
 պաարաստ: (Մոտենալով դուանը) Ռայզիկ, Ռայնա՛:

ՌԱՅՆԱ. — (Մտենլով) Գալիս եմ:

ՆԻԿՈՂԱ. — Ե՞նչ ես կրիայի պես քալում: Արագ պետք ե-
 շարժվել:

ՌԱՅՆԱ. — Յոթանասուն տարեկան վոր դառնաս, դու յել
 արագ չես քայլի:

ՆԻԿՈՂԱ. — Պատկերների առջևի բոլոր կանթեղները վառիր:
ՌԱՅՆԱ. — Լուռմ եմ (դուրս ե գնում):

ՆԻԿՈՂԱ. — (Դանդաղ խաչակինելով) Շնորհակալ եմ, տեր
 իմ: Դու քո անարժան սարուկին փրկեցիր վոճա-
 գործի ձեռքից:

Պարագույր

ՊԱՏԿԵՐ ՑԵՐՌՈՐԴ

Առաջին պատկերի գեկորացիան: Սեղանի մոտ նստած են՝
 Բորիսը, Դմիտրին յեվ Սերգեյը, Վասարանի մոտ՝ Մարինան
 յեվ Պետկոն: Մարինան ընթրիք ե պատրաստում: Պետկոն ու-
 շադրությամբ լսում և մեծերի խոսակցությունը:

ԲՈՐԻՍ. — (Թղթի վրա գծելով) Մենք կանցնենք բլուրնե-
 րի մոտով և կիջնենք գետի հովիտը, իսկ այնտեղից
 սկսվում են սարերը:

ՍԵՐԳԵՅ.—Այդպէս, իսկ հետո:

ԲՈՐԻՄ.—Այդ սարերում ամեն մի թուփ, ամեն մի շավիդ ծանոթ ե ինձ: Այնտեղ մենք ապահով կլինենք:

ԴՄԻԾԻՒ.—Վոստիկանությունն ամեն տեղ կփնտռի. մի թուփ անգամ չի թողնի:

ԲՈՐԻՄ.—Այնուամենախիվ մեզ չեն գտնի:

ՍԵՐԳԵՅ.—Կարծնում եմ:

ԲՈՐԻՄ.—Այս Ամենագլխավորը յես դեռ չեմ ասել ձեզ: Սրանից մի տարի առաջ վայրը ալծ ելի վորսում: Մտա ամենախիտ տեղը, և այնտեղ ահա, ալդ խիտ տեղում պատահեց մի քարայր: Այդ այրի մասին, բացի իմ լեզուրից, անշուշտ վոչվոք չգիտի: Պետքն, որու հիշում ես, թե վորտեղ ե այդ ալըզ:

ՊԵՏԿՈ.—Այո՛, հիշո՞ւմ եմ:

ԲՈՐԻՄ.—Շատ լավ: Քարայրին մոտ մի առվակ կա: Այսպիսով և բնակարան կունենանք և ջուր:

ԴՄԻԾԻՒ.—Իսկ ուտելիք:

ԲՈՐԻՄ.—Պետկոն մեզ միշտ ուտելիք կբերի: Սարերին նա ինձանից լավ ե ծանոթ:

ՍԵՐԳԵՅ.—Իսկ դու չես վախենում, պատանի:

ՊԵՏԿՈ.—Ինչից պիտի վախենամ:

ԴՄԻԾԻՒ.—Քեզ կարող են հետեւ:

ՊԵՏԿՈ.—Ո՞վ: Վոստիկանությունը: Անհոգ յեղեք, յես նրան կխաղացնեմ:

ՍԵՐԳԵՅ.—Կեցցես տղա:

ԲՈՐԻՄ.—Պետկոն փորձված տղա լե: Նրա վերաբերմամբ կարող ենք վստահ լինել: Եթե հետո՞ւ գյուղացիները մեզ միշտ կողնեն: Նրանց մեջ այնպիսիները կան,

վորոնց վրա միշտ կարելի յե հույս դնել: Կմեռնեն,
բայց չին մատնի:

ՄԱՐԻՆԱ. — Դուք սարերը չպետք ե փախչեք:
ԲՈՐԻՍ. — Ապա ուր:

ՄԱՐԻՆԱ. — Ռուսաստան: Այնտեղ միայն կարող եք ապա-
հով լինել:

ԲՈՐԻՍ. — Այս. այնտեղ մենք ապահով կլինենք, բայց դու
մոռանում ես, մայր, վոր մենք ալստեղ անելիք ու-
նենք: Մենք Ռուսաստան գնալ չենք կարող, յերբ
ալստեղ՝ Բոլգարիայում, մեր ընկերներին կախաղան են
բարձրացնում: Մենք պայքարի պիտի պատրաստվենք:

ՍԵՐԳԵՅ. — Այո՛: Դեռ անելիք շատ ունենք:

ԲՈՐԻՍ. — Մենք սարերն ենք բարձրանում միայն նրա
համար, վորպեսզի վոստիկանությունը մեր հետքը
կորցնի. իսկ միքանի որից հետո մենք նորից դործի
կանցնենք:

ՄԱՐԻՆԱ. — Դե դուք ավելի լավ զիտեք: Ձեր աչքերն ա-
վելի սուր են: (Խփում ե ժամը 12-ը):

ԲՈՐԻՍ. — 12-ն ե: Մի ժամից հետո ճանապարհ պիտի
ընկնենք:

ՄԱՐԻՆԱ. — Ի՞նչու այդքան շո՛ւտ:

ԲՈՐԻՍ. — Քանի մութս ե, պիտի սարը հասնել:

ՄԱՐԻՆԱ. — Դուրսը փոթորիկ ե:

ԲՈՐԻՍ. — Արդեն հանդարտվում ե,

ՄԱՐԻՆԱ. — Այդ գեղքում սկսեցնք. ձեղ համար ընթրիք
եմ պատրաստում:

ԲՈՐԻՍ. — Բեր, բեր, քաղցած ենք:

ՊԵՏԿՈ. — (Վերկենալով) Լուսամուտների տակ մեկը ման
ե գալիս:

(Բոլորը լրում են):

ԲՈՐԻՄ. — Յես վոչինչ չեմ լսում:

ՍԵՐԳԵՅ. — Յես ել:

ՄԱՐԻՆԱ. — Քեզ թվաց, Պետկո՛:

ՊԵՏԿՈ. Վոչ, ժողովկ: Յես լավ եմ լսում. այնտեղ ման
են դալիս (Միառժամանակ բոլորը լրում են: Մերք-
ընդմերք լսվում ե համու վոռնոցը):

ԲՈՐԻՄ. — Այո՛... Մեկը ման ե գալիս... Հիմա կանգ առավ...
նորից քայլում ե... (Ծունը նաջում ե):

ՊԵՏԿՈ. — Գնամ տեսնեմ (զնում ե սրահը):

ԲՈՐԻՄ. — Ո՞վ կարող ե լինել:

ՄԱՐԻՆԱ. — Գուցե մի անցնող եւ:

ԲՈՐԻՄ. — Զե՛, սա կարծես մի ուրիշ բան եւ:

ՊԵՏԿՈ. — (Ներս վազելով) Զինվորներ են:

(Բոլորը վեր են բռչում):

ԲՈՐԻՄ. — Հոտն առել են սատանաները:

ԴՄԻՏՐԻ. — Փախչենք:

ՍԵՐԳԵՅ. — (Որու կողմը նայելով) Ո՞ւր փախչենք. փախ-
չելու տեղ չկա:

ԴՄԻՏՐԻ. — Մկների նման թակարդն ընկանք:

(Լսվում ե դրան թվակիսկոցը):

ԲՈՐԻՄ. — Դուռը փակած եւ:

ՊԵՏԿՈ. — Այո՛:

ԲՈՐԻՄ. — Հը՛, ինչ, ընկերներ, անձնատուր չենք լինի:
(Հանում ե ատրնանակը):

ՍԵՐԳԵՅ. — Զենք լինի:

ԲՈՐԻՄ. — Սպասեցե՛ք, զուցե կարողանանք խարել նրանց:

ԴՄԻՏՐԻ. — Ի՞նչալես:

ԲՈՐԻՄ. — Կողքի սենյակը լուսամուտ ունի. Մենք կանց-

Նենք այստեղ, իսկ Պետկոն պահարանը կդնի դռան
առջեւ: Նրանք այդ բանը շուտ չեն նկատի: Պետկո՛,
դու աշխատիր նրանց պահել այստեղ, իսկ մինչ այդ
մենք կհանենք լուսամուտի շրջանակը և...

ՄԱՐԻՆԱ.—Փողոցում զինվորներ կան:

ԲՈՐԻՍ.—Գրո՛ղը տանի: Մի կերպ դուքս կպրծնենք:
Մութը կոգնի մեղ:

ՄԵՐԳԵՅ.—Բայց Պետկոյին կձերբակալեն:

ԲՈՐԻՍ.—Մենք կազատենք նրան:

(Իռան թվակիսիցը բանի գնում ուժեղանում ե:
Զայներ են լավում):

ՊԵՏԿՈ.—Շո՛ւտ արեք, գնացեք, թե չե կուշանաք: Յես
ու մայրիկը կզբաղեցնենք նրանց:

ՄԵՐԳԵՅ.—Մպասեցե՛ք:

ԲՈՐԻՍ.—Մպասելու կարիք չկա: Բոպեն թանգ և:
Գնանք...

ՊԵՏԿՈ.—Մա՛յրիկ, դու գնա, և ամեն կերպ աշխատիր
նախասենյակում նրանց պահել, մինչև մենք այստեղ
ամեն ինչ կարգի բերենք:

(Մարդինան գնում ե սրանը: Բորիսը, Աերգեյն ու
Դմիտրին մտնում են հարեվան սենյակը: Պետկոն
պահարանը դնում ե այդ դռան առջեվը:

ՄԱՐԻՆԱ.—(Նախասենյակում): Ո՞վ ե:

ՍՊՈ.—Բա՛ց արա:

ՄԱՐԻՆԱ.—Ի՞նչ եք ուղում:

ՍՊՈ.—Բա՛ց արա իսկույն:

ՄԱՐԻՆԱ.—Ո՞վ եք դուքք:

ՍՊՈ.—Բա՛ց արա, հետո կիմանաս:

ՊԵՏԿՈ.—Բաց արա, մա՛յրիկ:

(Մարինան բաց է անում դուռը: Ներս են բափփում՝
սպան, վոստիկանը յեզ զինվորները):

ՍՊԱ.— (Նայելով չորս կողմը) Բա ո՞ւր են նրանք:

ՊԵՏԿՈ.— Ո՞վ:

ՍՊԱ.— Յեղբայրդ:

ՊԵՏԿՈ.— Յեղբայրս Սոֆիայումն եւ:

ՍՊԱ.— Ստում ես, նա այստեղ եւ:

ՊԵՏԿՈ.— Դե յեթե գիտեք, վոր այստեղ եւ, եւ ինչո՞ւ յեք
հարցնում:

ՍՊԱ.— Խուզարկել: Այսեն տեղ խուզարկել: Այստեղ են:
(Զինվորներն սկսում են տնկարգ կերպով ամեն ինչ
տեղահան անել սենյակում: Մեկը նույնիսկ վառա-
րանի մեջն ել ե նայում):

ՎՈՍ.— Իզուր եք այստեղ փնտռում, պարոն սպա:

ՍՊԱ.— Ապա մւր կորան նրանք:

ՎՈՍ.— Պետք եւ տանիքն ու բակը նայել:

ՍՊԱ.— Դեպի բակը, դեպի տանիքը: Շուտ:

ՎՈՍ.— Լոս' մ եմ: Բայց լապտեր եւ պետք

ՍՊԱ.— Պառա՛վ: Տուր լապտերը:

ՄԱՐԻՆԱ.— (Պատից վերցնելով լապտերը) Տանիքում վոչ-
վոք չկա:

ՍՊԱ.— Այստեղ չկա՞ն — տանիքում չկա՞ն: Ի՞նչ եւ, ծխնե-
լույզնիվ դուրս թռան, ի՞նչ եւ: Հետևեցեք ինձ:

ՊԵՏԿՈ.— (Կանգնելով դռան առջեվը) Զհամարձակվեք
այստեղ մտնել:

ՍՊԱ.— Ա՛խ դու, սատանի ճուտ: (Ճրում ե Պետկոյին յեվ
զինվորների նետ դուրս ե վազում):

ՊԵՏԿՈ.— Փնտռեցե՛ք, գուցե գտնեք: Մալրիկ, գնա՞նք:

ՄԱՐԻՆԱ.— Ո՞ւր:

- ՊԵՏԿՈ.** — Սարերը, Մենք այստեղ ել չենք կարող մնալ։
Նրանք կձերբակալեն մեզ։
- ՄԱՐԻՆԱ.** — Իսկ առևնը։
- ՊԵՏԿՈ.** — Ազատությունը տանից թանգ եւ։
(Փողոցից լավում ե կրակոց յեւ աղմուկ)։
- ՄԱՐԻՆԱ.** — Նրանց նկատել են։
- ՊԵՏԿՈ.** — Վաշինչ, նրանք կազատվեն։
- ՄԱՐԻՆԱ.** — (Փարաֆանը զցելով զլիին) Գնա՞նք։
- ՊԵՏԿՈ.** — Առաջ դու գնա՛, իսկ յես քո յետեից կդամ։
Մենակ ավելի հեշտ կիմնի դուրս գնալ։ (Մարինան
դուրս ե գնում։ Պետքոն պատից վեցնում ե նրա-
ցանը. այդ րոպեյին ներս ե վագում սպան)։
- ՍՊԱ.** — Կանգնի՛ր։
- ՊԵՏԿՈ.** — Թո՞ղ, թե չե՞ կլրակե՞մ։
- ՍՊԱ.** — Ա՛խ դու շան լակոտ (խլում ե նրացանը). Ասա՛,
մեր ե յեղբալրդ։
- ՊԵՏԿՈ.** — Ալդ մասին իրեն հորցը եք։
(Ներս են մտնում լապտերը ձեռքներին զինվորներն
ու վոստիկաններ)։
- ՍՊԱ.** — Հը։
- ՎՈՍՏ.** — Զկան։
- ՍՊԱ.** Ապա ո՞ւր են նրանք։
- ՎՈՍՏ.** — Նոր հիշեցի, պարօն սպա, այստեղ մի փոքրիկ
սենյակ պետք ե լինի։
- ՍՊԱ.** Բայց ինչո՞ւ ելիր լոռում, ապո՛ւշ. վո՞րն ե այդ
սենյակ։
- ՎՈՍՏ.** — Պետք ե հեռացնել այս պահարանը։
- ՍՊԱ.** — Դէ, շուտու իսկ դուք բռնեցեք ես լակոտին։
(Զինվորները հեռացնում են պահարանը)։

ՎՈՍՏ.—(Բայց անելով դուռը) Վոչվոք չկա:

ՄՊԱ. — Ապա ո՞ւր են նրանք:

ՎՈՍՏ.—Փախել են լուսամուտով:

ՄՊԱ.—Փախել են. փախել են: Մեր քթի տակից: (Բըռ-
նելով վլուսիկանի կրծքից) Հիմա՛ր, ինչու իսկուն
չասացիր այդ սենյակի մասին: Ասա՛, ինչու:

ՎՈՍՏ.—Ներեցե՛ք, պարոն սպա:

ՄՊԱ.—Նրանց տեղ յես քե՛զ բանտ կդնեմ: Յես քեղ դա-
տի կտամ: Դու պատասխանատու յես նրանց հա-
մար,

ՎՈՍՏ.—Յես... յես...

ՄՊԱ. — Այս լակոտը խարեց մե՛զ, հիմարներիս: Նրանք
դուրս պըծան մեր ձեռքից: Ե՛, սատանան տանի՛:
(Ձեռէերը շարժելով մի անկյունից մյուսն ե վա-
գում): Այս մասին իշխանությունը կիմանա՛: (Դիպ-
չելով մի զինվորի) Ի՞նչ ես վոտքի տակ ընկնում,
իշխ գուլս: Միայն հիմարը չի փախչի ձեզանից:
Պառավ կանայք եք դուք, և վոչ թե զինվորնե՛ր:

ՎՈՍՏ.—Պետք ե հետապնդել նրանց, պարո՞ն սպա:

ՄՊԱ.—Քո զլիի պատովելը գիտենա, հիմա կհասնե՞ս
նրանց. վրնց չե: Հետեւցե՛ք ինձ:

(Ուզում ե դուրս գնալ, բայց այդ ժամանակ ներս
ե մտնում մի զինվոր):

ԶԻՆՎՈՐ. — Նրանք փախան, պարոն սպա: Հենց մեր ձիա-
ներով փախան:

ՄՊԱ.—Ինչու չեյիք կըակում:

ԶԻՆՎՈՐ. — Կըակում ելինք, բայց փողոցը մութն եր:

ՄՊԱ.—(Մոտենալով Պետկյոյին) Ասա՛, լակուտ: Ո՞ւր փա-
խան նրա՞նք: Դե՛, ի՞նչ ես լոռում:

ՊԵՏԿՈ. — Յեռ լսում եմ ձեզ:

ՍՊԱ. — Ո՞ւր ե յեղբայրդ:

ՊԵՏԿՈ. — Ազատության մեջ:

ՍՊԱ. Միհնույն ե, մենք կըոնենք նրանց:

ՊԵՏԿՈ. — Ի՞նչ կա վոր, փորձե՛ցեք:

ՍՊԱ. — Լոիր, ոձի ճուտ: (Վուսիկանին) Բանտարկիր սրան մի տեղ՝ Բայց տե՛ս, չփախչիւ իսկ վաղը կը-տանենք Սոփիա,

ՎՈՍՏ. — Լսում եմ: Բայց չգիտեմ, թե վորտեղ բանտարկեմ:

ՍՊԱ. — Բանտ չունե՞ք դուք:

ՎՈՍՏ. — Դեռ չունենք, պարոն սպա:

ՍՊԱ. — Սա ի՞նչ բան ե: Հիմա տմեն գյուղում բանտ և կախաղան պիտի լինի:

ՎՈՍՏ. — Մենք ել կունենանք, պարոն սպա: Առայժմ սրան կրանտարկենք տանուտերի շտեմարանում:

ՍՊԱ. — Լո՛վ! Իսկ սրա յեղբայրը մեզանից չի փախչի: Մենք կկախենք նրան:

ՊԵՏԿՈ. — Յեթե մինչ այդ ձեղ չկախէն:

ՍՊԱ. — Ի՞նչ լոփ'ր, լակոտ: Տարե՛ք սրան: Իսկ այս տունն ալրել այնպես վոր բացի մոխրից այստեղ վոչինչ չմնա:

ՊԱՏԿԵՐ ՀՈՐԻՌԴԻ

Նիկոլա Ցելինի շտեմարանը: Վարագույրը բարձրանալուց հետո քեմը միառժամանակ մութն ելինում: Հետո ծայներ են լսվում, ընկնում և յերկաթյա փակիչը յեվ լապտերը ծեռքին ներս ե մտնում Նիկոլան, նրա յետեվից սպան յեվ Պետկոն - զինվոր-ներով շրջապատված: Շտեմարանում միքանի հատ մեծ արկղներ կան հացանատկի յեվ ալյուրի համար: Առաստաղի լուսամուտը ցանցապատ ե:

ՆԻԿՈԼԱ. — Ահա շտեմարանը:

ՍՊԱ. — Սա չի՞ փախչի արտեղից (նայելով չորս կողմը):

ՆԻԿՈԼԱ. — Ի՞նչ եք տառվ, պարոն սպա, պատերն աղյուսից են, իսկ դուռը յերկաթակապ ե:

ՍՊԱ. — Իսկ պատուհանը:

ՆԻԿՈԼԱ. — Պատուհանը յերկաթե վանդակ ունի: Դուք մի անհանգստանաք: Այս շտեմարանը բանտից ավելի ապահով ե: Յես այստեղ ել միշտ նստեցնում եմ գյուղացիներին (կախում ե լապտերը):

ՍՊԱ. — Լավ, Բայց և այնպես պետք ե կապել ձեռքերը:

ՆԻԿՈԼԱ. — Դա կարելի յե:

ՍՊԱ. — Իսկ պարան ունե՞ք:

ՆԻԿՈԼԱ. — Կճարվի (անկյունի արկղից մի պարան ե հանօւմ): Համեցե՞ք:

ՍՊԱ. — Ամուր ե:

ՆԻԿՈԼԱ. — Վստահ յեղեք, պարոն սպա:

ՊԵՏԿՈ. — Իսկ և իսկ ձեր պարանոցի համար:

ՍՊԱ. — Զայնդ (Զինվորներին) կապեցե՞ք սրան:

(Զինվորները Պետկոյի ձեռքերը կապում են մեջին):

ՆԻԿՈՂԱ. — Ամուր կապեցեք:

ՊԵՏԿՈ. — Վախենում եք — կփախչե՞մ:

ՍՊԱ. — ԶԵս փախչի: Հիմա սրան միքիչ հարցաքննենք:

ՊԵՏԿՈ. — Իդուր ե, պարոն սպա, յես ձեզ վոչինչ չեմ ասի:

ՍՊԱ. — Կտեսնենք... (մոտենում է Պետկոյին): Դու դիմես, թե վորտեղ ե յեղբայրդ:

ՊԵՏԿՈ. — Այս, զիտեմ...

ՍՊԱ. — Ասա:

ՊԵՏԿՈ. — Յես ձեզ վոչինչ չեմ ասի:

ՍՊԱ. — Չո՞ս ասի:

ՊԵՏԿՈ. — Վո՞չ:

ՍՊԱ. — Իսկ յեթե մենք քեզ կախենք:

ՊԵՏԿՈ. — Իսկ յեթե կախեք, ենժամանակ, իհարկե, արդեն վոչինչ չեմ ասի:

ՍՊԱ. — Մատանի ճուտ:

ՆԻԿՈՂԱ. — Ասա, Պետկո, թե չե վատ կլինի:

ՊԵՏԿՈ. — Մի վախեցնեք, պարոն տանուտեր:

ՍՊԱ. — Լսիր, Պետկո, յեթե դու ասես, թե վորտեղ ե յեղբայրդ, մենք քեզ իսկուն կազատենք. հասկանո՞ւմ ես, իսկույն: Դու վոչ բանտ կնստես և վոչ կախաղան կբարձրանաս. իսկ յեթե դու լոես և վոչինչ չասես, մենք քեզ կկախենք: Միթե դու ուզում ես մեռնել յեղբորդ համար, վոր քեզ թողեց ու փախավ:

ՊԵՏԿՈ. — Նա կազատի իմած:

ՍՊԱ. — Կազատի: Հա-հա-հա-հա-հա կազատի սրան:

ՆԻԿՈՂԱ. — Հիմար մի լինի, Պետկո' :

ՍՊԱ. — Քո յեղբայրդ եստեղ յերեալ ել չի կարող:

ՊԵՏԿՈՒ.—Կառեմնենք:

ԱՊԱ. — Միթե դու կարծում ես, թե նա կջարդի շտեմա-
րանը կամ պատուհանից դուքս կհանի քեզ: Վո՞չ
Պետկո, լուսամուտի վանդակը շատ ամուր ե, իսկ
շտեմարանն ավելի ես: Դե, ընտրիր, կախաղան կամ
ազատություն:

ՊԵՏԿՈ. — Յես վոչինչ չեմ ասի: Թողեք ինձ:

ԱՊԱ. — Զե՛, կասե՛ս, անպիտան տղա:

ՊԵՏԿՈ. — Հեռացե՛ք ինձնից:

ԱՊԱ. — Յես քո լեզուն բա՛ց կանեմ: Յես ամեն ինչ կի-
մանամ քեզնից: (Զինվորներին) Ե՛ւ դո՛ւք, բռնեցե՛ք
սրան: Ամուր բռնեցե՛ք: (Զինվորները բռնում են
Պետկոյի ձեռվերը):

ՊԵՏԿՈ. — Ճավո՞ւմ ե: Լսո՞ւմ եք: Ճավում ե:

ԱՊԱ. — Դու հիմա ել այնպես չես յերգի: (Գրպանից հա-
նում ե մի տոփ լուցկի, վառում յեվ մոտեցնում
Պետկոյի ձեռվերին): Դե՛, հիմա՞ ինչ կասես:

ՊԵՏԿՈ. — Վոչինչ (դուրս պրծնելով զինվորների ձեռ-
վից): Թողեք ինձ:

ԱՊԱ. — Վորտե՞ղ ե յեղբայրդ:

ՊԵՏԿՈ. — Զե՞մ ասի:

ԱՊԱ. — (Վառելով յերկորդ լուցկին) Կա՞սես:

ՊԵՏԿՈ. — Սատանանե՞ր:

ՆԻԿՈՂԱ. — Ափսո՞ս հն ձեռքերդ, Պե՞տկո:

ՊԵՏԿՈ. — Լոփի՛ր, կապած շուն:

ԱՊԱ. — Հիմա կասի նա (կրկին վառում ե լուցկին):

ԶԻՆՎՈՐ. — Պարոն սպա: Այսպես չի կարելի. նա դեռ
յերեխա լե:

ԱՊԱ. — Ի՞նչ ասացի՞ր: Կը կնի՞ր:

ԶԻՆՎՈՐ. — Սա գաղանություն եւ:

ՍՊԱ. — Ա՛խ, սրիկան! Դու մոռացել ես կարգ ու կանոնը:
Արդ խոսքերիդ համար յիս քեզ դատի կտամ:

ԳԵՏԿՈ — (Զինվորների ձեռքից դուրս պրծնիելով, շառ և
զալիս յեվ թքում սպայի յերեսին) Ա՛յ քեզ:

ՍՊԱ. — Ախ դու շան լակոտ (սրբում և յերեսը): Տանու-
տե՞ք:

ՆԻԿՈԼԱՅ. — Լոռում եմ:

ՍՊԱ. — Այս լակոտը զիտե, թե վորտեղ են թագնված կու-
մոնիստաները, բայց չի ուզում մատնել նրանց: Բա-
ցի արդ, նա վիրավորեց ինձ, թագավորտկան բա-
նակի սպացիս: Այս բոլորի համար միայն մի սպատիժ
կարող ել լինել — մահ:

ՆԻԿՈԼԱՅ. — Ճիշտ ե, պարոն սպա:

ՍՊԱ. — Հենց այս գիշեր հրապարակում պետք ե պատ-
րաստ լինի կախաղանը. իսկ վաղն առավոտյան
բոլոր զոււղացիներին քշեր հրապարակ, և ուղիդ
ժամը 7-ին այս լակոտը պետք ե կախվի:

ՆԻԿՈԼԱՅ. — Պատրաստ կլինի:

(Վազելով ըսեմարանն ե մենում վոստիկանը, առանց
գլխարկի, մազերը խննված):

ՎՈՈԾ. — Գլուղը վոտքի յե կանգնում:

ՆԻԿՈԼԱՅ. — Ի՞նչ ե պատահել:

ՎՈՈԾ. — Գլուղացիները հուզվում են:

ՍՊԱ. — Ի՞նչպես թե հուզված են:

ՎՈՈԾ. — Գոռում են, հայիոյում, հավաքվում խումբ-
խումբ:

ՍՊԱ. — Բա ի՞նչ են շինում զինվորները:

ՎՈՈԾ. — Զգիտեմ, պարոն սպա:

ՆԻԿՈԼԱ. — Ամենավողորմած աստված, իս ի՞նչ բան ե:

ՍՊԱ. — Դու աստծուց մի կպչի Յիթե մենք զյուղացիներին չհանգստացնենք, աստված մեզ չի ոգնի: Գնանք, իսկուն պետք ե ցըել նրանց,

ՆԻԿՈԼԱ. — Բա ես լակոտին ի՞նչ անենք:

ՍՊԱ. — Մինչև առավոտ կմա ալստեղ, իսկ առավոտյան կախաղան կըարձրս ցնենք:

ՊԵՏԿՈ. — Չեմ վախենում ձեր կախաղանից, չե՛, չեմ վախենում:

ՍՊԱ. — Լոի՛ր, ոճի ճո՛ւտ (հրում ե Պետկոյին, վորը վայր ե ընկնում): Գնանք:

(Քոլորը դուրս են զնում, դուռը դրոից փակում են):

ՊԵՏԿՈ. — (Վերկենալով յեվ չորս կողմը նայելով) Գնացին... (Միառժամանակ նստում ե անշարժ. հետո վեր ե կենում յեվ սկսում ե աչքերով ինչ-վոր բան փնտուել): Գոնե՛ մի մեխ... կա (մոտենալով պատին՝ սկսում ե ձեռքերը ինչ-վոր բանի խել): Պատրաստ ե՛ (քառում ե, պարանի ընկնում ե հատակին: Պետկոն ըփում ե ձեռքերը, մոտենում ե մեծ արկղին, բաց ե անում յեվ նայում մեջը): Ալլուր ե... ե՛խ, զո՞նե մի յերկաթի կտոր... (Նայում ե չորս կողմը: Կարմիր լույս ե յերեվում, վոր խանի զնում, ոժեղանում ե): Արշալույն ե... (արկղը մոտեցնում ե պատին, կանգնում ե վրան յեվ նայում ե լուսամաշից): Մեր տռանը... հրդեհել են մեր տռանը: Սատանաներ... (Թռչում ե արկղի վրայից, մոտենում ե դրանք յեվ սկսում ե դուռը ծեծել): Բաց արեք, բաց արեք... վոչվոք չկա... Դե՛ լավ... տան համար ել պատասխան կտաք... ամեն բանի, ամեն բանի
Պետկո Զվանով—Ց

համար: (Զիսկացնում են տեմարանի դռան փակիչը
Պետքն ձեռները մեջքին նսում ե անկյունում: Բա-
նալիները չխչսկացնելով ներս ե մնում նիկո-
լան:)

ՆԻԿՈԼԱ. — ՊԵՇԿՈ: (Չորս կողմը նայելով): Գալլի ճռւտի
նման կուչ ե յեկել անկյունում: ՊԵՇԿՈ:

ՊԵՏԿՈ. — Ի՞նչ ե:

ՆԻԿՈԼԱ. — ԱՐԺ այստեղ:

ՊԵՏԿՈ. — Ի՞նչ ես ուզում:

ՆԻԿՈԼԱ. — Դե մնա արի, մի վախենար:

ՊԵՏԿՈ. — Յես քեզանից չեմ վախենում:

**ՆԻԿՈԼԱ. — Լսիր, ճիշտ ե, վոր յեղբայրդ ուզում ե ինձ
կախել:**

ՊԵՏԿՈ. — Իսկ դու վախենում ես պարանից:

**ՆԻԿՈԼԱ. — Ի՞նչու յե նա ինձ վրա այդքան բարկացել:
Միթե յես նրան մի վատություն եմ արել:**

**ՊԵՏԿՈ. — Դու վոչ թե միայն նրան ես վատություն ա-
նում, այլ մեզ՝ բոլորիս, ամբողջ գյուղին... Ամենա-
լավ վարելահողը, ամենալավ արոտատեղը, ամենա-
լավ անտառը քոնն ե: Դու բոլորը զրավել ես: Դու
ճնշում ես ամբողջ գյուղին, բոլորը չարացած են
քեզ վրա:**

ՆԻԿՈԼԱ. — Գիտեմ:

ՊԵՏԿՈ. — Ի՞նչո՞ւ յես յեկել:

**ՆԻԿՈԼԱ. — Վոր յեկել եմ, կնշանակի մի բան կա: Վաղը
պետք ե կախեն քեզ:**

ՊԵՏԿՈ. — Եղ լսեցի:

**ՆԻԿՈԼԱ. — Սպան իր վորոշումը չի փոխի: Հիմա կախա-
ղանը կպատրաստեն, իսկ վաղն առավոտյան...**

ՊԵՏԿՈ. — Նրանից կկախեն քեզ և սպային:

ՆԻԿՈԼԱ. — Ի՞նչ, Ի՞սձ, Ո՞վ կկախի ինձ...

ՊԵՏԿՈ. — Կդանվեն բարի մարդիկ:

ՆԻԿՈԼԱ. — Թո յեղբալը սարերն ե փախել, իսկ գյուղացիները վախկոտ են. նրանք մեզ մատով անգամ չեն համարձակվի դիպչել... Մենք զինվորներ ունենք, զենք... իսկ նրանք ի՞նչ ունեն: Ցցե՞ր: Մահակներ... Այդ զենքերից մենք չենք վախենում... (Միառժամանակ լրու կանգնում, ապա նայում ե արկղի յեղրին յեվ մորումը բորելով մտածում ե): Լսիր, Պետկո:

ՊԵՏԿՈ. — Ի՞նչ ե:

ՆԻԿՈԼԱ. — Կուզենալի՞ր գնալ ալստեղից:

ՊԵՏԿՈ. — Ո՞ւր գնալ:

ՆԻԿՈԼԱ. — Ազատվել... Սարերը գնալ...

ՊԵՏԿՈ. — Հը՞, ի՞նչ ե, չինի՞ ուզում ես ազատել ինձ:

ՆԻԿՈԼԱ. — Կարող եմ անել:

ՊԵՏԿՈ. — Հավատալս չի գալիս—չեմ հավատում:

ՆԻԿՈԼԱ. — Բաց կանեմ քո թևերը, և դու կարող ես գնալ ուր վոր ուզես: Բայց նախ քան այդ...

ՊԵՏԿՈ. — Նախ քան այդ—ի՞նչ...

ՆԻԿՈԼԱ. — Դու պետք ե ասես, թե վորտեղ ե յեղբալը:

ՊԵՏԿՈ. — Այ թե ուր ես խփում... ե, դու լսեցիր, թե յես ինչ ասացի սպային:

ՆԻԿՈԼԱ. — Պետկո, հիմար մի լինիր (հեռվից ձայներ են լսվում): Սա ի՞նչ ձայներ են:

ՊԵՏԿՈ. — Զգիտեմ:

ՆԻԿՈԼԱ. — Ցուց տուր մեզ, թե վորտեղ ե յեղբալդ, և դու կազատվես:

ՊԵՏԿՈ. — Դու ինձնից վոչինչ չես իմանալ... (Մոտենալով տանուտերին) Հեռացիք այստեղից: Հանդիսա թող ինձ...

ՆԻԿՈՂՅ. — Դու գեռ յերիտասարդ ես, չարժե մեռնել, Պետկո: Թո կլանքը գեռ նոր և սկսվում:

ՊԵՏԿՈ. — Եես չեմ պատրաստվում մեռնել:

(Արագ մոտենում ե Նիկոլային յել ուժեղ կերպով հրում կրծքին: Նիկոլան կօրցնում ե հավասարակրեռությունը յեվ ընկնում ալյուրի արկոյի մեջ, Պետկոն ծածկում ե արկոյը յեվ փակում): Վերջացա՛: (Նիկոլան սկսում ե բխթխացնել յեվ աղաղակել): Գոռա, գոռա... Միենույն ե, վոչվոք չի լսի... իսկ այժմ կարելի յե... (Մոտենում ե դռանը, բայց այդ ժամանակ դուռը բացվում ե ու ներս ե մտնում սպանի):

ՍՊԱ. — Կանգնիք: Ռուր (քոնում ե Պետկոյի կրծքից):

ՊԵՏԿՈ. — Թող: (Աշխատում ե ազատվել սպանի ձեռքից):

ՍՊԱ. — Նրանց մժա ես գնում... Զեմ թողնի... կաց այստեղ:

(Նրանց սեջ կռիվ ե սկսվում: Սպան վայր ե գցում Պետկոյին, բայց այդ ժամանակ ներս են վագում Բորիսը յեվ միքանի զյուղացիներ):

ԲՈՐԻՍ. — Ահա նա:

ԳՅՈՒՂՄՑ. — Թակորդն ընկար, սիրելիս, ինքո՞ք քո վոտքով: Ընկերնե՛ր, բռնեց՞ք որան:

ՊԵՏԿՈ. — Բորիս:

ԲՈՐԻՄ. — Պետկն (զյուղացիները բռնում են սպային):

ՍՊԱ. — Թողե՛ք ինձ:

ՊԵՏԿՈ. — Տանուտերն եստեղ ե. (բաց ե անում արկղը):

ԴՌԵՐԱ յեկեք պարոն տանուտե՛ր: (Նիկոլան դուրս ե գալիս—մխօքերը, հագուստը յեվ յերեսը ալյուրոս):
Ահա նա:

ԳՅՈՒՂԱՅ. — Ա՛յ թե վորտեղ ե նա: Կե՛ցցես տանուտե՛ր:

ԲՈՐԻՄ. — Յերկուսն ել այստեղ են: Տարե՛ք սրանց, ընկեր-նե՛ր:

ՍՊԱ. — Դուք մեղ ձեռք տալու իրավունք չունե՛ք: Մենք իշխանության ներկայացուցիչներն ենք:

ԲՈՐԻՄ. — Մենք չենք ճանաչում այդ իշխանությունը:

ՆԻԿՈԼՈ. — Ընկերնե՛ր: Ինչու համար եք ինձ... Յես...
յես...

ԳՅՈՒՂԱՅ. — Ա՛յ, դու խորամանկ աղվես: Հիմա ուրիշ յերգ ես ւերգում: Սրան ել տարե՛ք, ընկերներ:

ՍՊԱ. — (Դիմելով զյուղացիներին) Դուք ել եք ես խոռվարակի կողմը... Դուք ել եք իշխանության դեմ:
Զինվորնե՛ք—յեկե՛ք ինձ մոտ:

ԲՈՐԻՄ. — Զինվորներդ զինաթափ են:

ՍՊԱ. — Թողե՛ք ինձ:

ԲՈՐԻՄ. — Վհչ մի տեղ չե՛ս գնա:

ՍՊԱ. — Յես գնալը կգնամ, իսկ դու—մի... (նրելով զյուղացիներից մեկին, գրանից նանում ե ատրհանակը),

ԲՈՐԻՄ.— (Ա.առջ նետվելով, սպայի ձեռքից խլում է ատրնանակը): Զենքի մի դիմեք:


ՍՊԱ.—Վերջապես սա ի՞նչ բան եւ:


ԲՈՐԻՄ.— Ապստամբություն: Հասկացար ի՞նչ:


ՍՊԱ.— Ապստամբություն:


ԳՅՈՒՂԱՑ.— Հասկացավ, վերջապես հասկացավ: Փողոց տարեք սրանց, ընկերներ, փողոց տարեք: Հիմա մենք ենք դատելու սրանց:

Պատճենագույն









ԳԱԱ ՀԽՍՆԱՐԱՐ ԳԻՒՆ. ԳՐԱԴ.



220041571

A II
41571